ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3512-Ա « 28 » օգոստոսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՊՑԻԳ ՔԱՂԱՔ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգի քաղաքապետարանի միջազգային հարաբերությունների վարչության պետ Գաբրիելե Գոլդֆուսի 18.08.2025 թվականի նամակ-հրավերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի 25.08.2025 թվականի N Ն/48931-25 զեկուցագիրը՝ «Երևան և Լայպցիգ քաղաքների միջև մշակութային տարի իրականացնելու վերաբերյալ» համաձայնագրի շրջանակներում երկկողմ հանդիպումներին և քննարկումներին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի սեպտեմբերի 22-ից 25-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաք՝ հետևյալ կազմով.

Հայկ Մկրտչյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալ
Աննա Եղիազարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության տուրիզմի բաժնի պետ
Վերգինե Սիմոնյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականցվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին՝ բացառությամբ գիշերակացի, որն իրականացնում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալ Հայկ Մկրտչյանի, նույն վարչության տուրիզմի բաժնի պետ Աննա Եղիազարյանի բացակայության ընթացքում նրանց պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Գոշ Սարգսյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետ Վերգինե Սիմոնյանի բացակայության

ընթացքում արտաքին կապերի վարչության արտաքին հարաբերությունների բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության արարողակարգի բաժնի պետ Լուսինե Ղարիբյանին:

5.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ